26.805

1 MAR 2010

ՄՆԵՍԱ ՅԵՐԵՔ

# ՀՐԱՄԱՆ

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ № 682

26 դեկտեմբերի, 1937 թ.

*Սոցիալիստական շինարարության հաջողությունները, մեր յերկրի աշխատավորների նյութական և կուլտուրական մակարդակի աճը բացառիկ բարեհաջող պայմաններ ստեղծեցին խնայողական դրամարկղների աշխատանքների համար: Չնայած դրան՝ խնայողական դրամարկղներն աշխատում են չափազանց վատ և սիստեմատիկորեն չեն կատարում ավանդների ներգրավման և պետական փոխառության միջոցների գանձման պլանը: Առանձնապես անբավարար են աշխատում գյուղական խնայդրամարկղները, ուր նույնպես կան միջոցների ներգրավման պլանը բավականաչափ գերակատարելու բոլոր հնարավորությունները:*

*Խնայողական սիստեմի վատ աշխատանքը ձեռնտու յեր դասակարգային թշնամիներին: Ժողովրդի ներկայումս գլխազերծ արված թշնամիները, վորոնք սողոսկվել էին ֆինանսական մարմինների և խնայողական դրամարկղների ղեկավարությունում, գիտակցա-*



336
ու-11

11.09.2013
26.805

բար քայքայում էին խնայողական դրամարկղների սիստեմը։

Խնայողական դրամարկղների աշխատանքներում յեղած վնասարարության հետևանքները լիկվիդացիայի յենթարկելու համար արագ և վճռական միջոցներ ձեռնարկելու փոխարեն, միջոցների ներգրավման պլանը կատարելու և գերակատարելու համար պայքարը բոլշևիկորեն կազմակերպելու փոխարեն, խնայողական դրամարկղների սիստեմի ղեկավար աշխատողների մեծամասնությունը հինգ ամսվա ընթացքում զբաղվում են միայն սիստեմում յեղած վատ աշխատանքների և վնասարարության փաստերի հասարակ ցուցակագրումով, գործնականում տապալելով պլանի կատարումը։ Նույնիսկ 1937 թ. նոյեմբերի 27-ին, Խնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչության պետին զեկուցելիս՝ ՌՍՖՍՀ Խնայդրամարկղների և Պետվարկի Վարչության պետ՝ ընկ. Վորոնցովը, Գորկովսկու մարզային վարչության պետ՝ ընկ. Շարլովսկին, Իվանովսկու մարզային վարչության պետ՝ ընկ. Ռազդումինը, Օրջոնիկիձեյի յերկրային վարչության պետ՝ ընկ. Չետվերնին և այդ մարզերի շրջանային խնայողական դրամարկղների մի շարք վարիչներ թվարկեցին վատ աշխատանքների փաստերը, բայց նրանցից վոչ մեկը չասեց պլանը կատարելու և աշխատանքներում յեղած թերությունները ուղղելու միջոցառումների ծրագիր։

Խնայողական դրամարկղների աշխատողների զգալի մասը դեռևս չի գիտակցել Համ. Կ(բ)Կ ԿԿ Փետրվար-մարտյան Պլենումի վորոշումներին համապատասխան



իրենց աշխատանքները բոլշևիկորեն վերակառուցելու անհրաժեշտությունը։

Մի շարք աշխատողներ իրենց ամենօրյա աշխատանքներում դեռևս թույլ են տալիս քաղաքական կարճատեսություն, անհոգություն, անփութություն և ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի և Պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչության կարգադրությունների ուղղակի խախտում։

Խնայողական սիստեմում մինչ այժմ մեծ չարիք է հանդիսանում պաշտոնյական գործերը լուծելու մեջ յեղած ընտանեկանությունը և հաստատված կանոնների խախտումը։ Կոպիտ կերպով խախտվում են մարդկանց աշխատանքի ընդունելու և արժեքների հետ գործ ունենալը նրանց թույլատրելու կանոնները, պահպանության, պահեստարանները փակելու, բացելու և կնքելու և բանալիները պահելու կանոնները, չեն պահպանվում դրամարկղային կանխիկի և արժեքների լիմիտները, խախտվում են գործառնություններ կատարելու և գործառնության օրվա յեզրափակման կանոնները։ Այդ բոլորի հետևանքով՝ միայն 1937 թ. վերջին 3 ամիսներում հափշտակված է 4 միլիոն ռուբլու արժեքներ և դրամ։

Ժողովրդի թշնամիների վնասարարական գործունեությունն առանձնապես արտահայտվեց խնայողական դրամարկղները մասսայորեն փակելու մեջ։ 1935—1936 թ. փակվել է 16000-ից ավելի խնայողական դրամարկղներ, վոր կազմում եր խնայողական դրամարկղների ամբողջ ցանցի մոտ կեսը։ Առանձին մարզերում (Սվերդլովսկու, Կալինինսկու, Չելյաբինսկու, և այլն)

փակվել են բոլոր խնայողական դրամարկղների 60 տոկոսից ավելին: Մի շարք քաղաքներում և շրջաններում խնայողական դրամարկղների մնացած ցանցը չի ապահովում միջոցների ներգրավման և աշխատավորության ճիշտ սպասարկելու խնդիրները: Խնայողական դրամարկղների ղեկավարները, տեսնելով ցանցի թուլությունն ու խնայդրամարկղների բացահայտորեն անբավարար լինելը բազմաթիվ քաղաքներում և շրջաններում, բայցևայնպես հարց չեն դրել ցանցը լայնացնելու անհրաժեշտության մասին, այլ, ընդհակառակը, ընթացել են խնայողական դրամարկղները հետագայում ևս փակելու ճանապարհով: Այդ ակնհայտնի կերպով ցույց է տալիս, թե ինչպես հանրապետական, յերկրային և մարզային վարչությունների միքանի պետեր և կենտրոնական ու շրջանային խնայողական դրամարկղների վարիչներ գործամոլաբար, առանց քաղաքական պատասխանատվության են վերաբերվում դեպի իրենց պարտականությունները: Ավանդատուներին ճիշտ սպասարկելը կազմակերպելու կարևորագույն խնդրի կատարումը նրանք հակադրում են իրենց ապարատի հարմարություններին, ըստ յերևույթին համարելով, որ որքան քիչ խնայդրամարկղներ լինեն, այնքան եւ քիչ գլխացավանք կլինի:

Մինչև այժմ խնայդրամարկղների մեծամասնությունում արմատախիլ չի արված կոպիտ, արհամարհական վերաբերմունքը դեպի ավանդատուների և պետական փոխառությունների պարտատոմսատերերի շահերը: Նույնիսկ Մոսկվայում, ուր խնայդրամարկղների աշխատանքները պետք է դրված լինեն օրինակելի ձևով, № 58 խնայողական դրամարկ-



ղում 3 ամսվա ընթացքում ստացվել է 89 բողոք անբավարար սպասարկման և կոպտության համար: Աշխատավորների բողոքներին խնայդրամարկղների ղեկավարները թույլ վերաբերմունք են ցույց տալիս:

Մասսայական-բացատրական աշխատանք ավանդների գծով փաստորեն չի տարվում: Մի շարք տարիների ընթացքում խնայողական գործի հանրամատչելի գրականություն համարյա թե չի հրատարակվել:

Խնայդրամարկղների սիստեմը կազմակերպչորեն չի ամրացրել ԽՍՀ Միության Պաշտպանության ամրացման փոխառության հաջողությունները, որին աշխատավորները դիմավորեցին հսկայական ուրախությամբ և վոգևորությամբ: Փոխառության դրամների գանձման վիժեցումը ՌԽՖՍՀ և ԲԽՍՀ գյուղում՝ ուղղակի արդյունք է այն բանի, որ կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների վարիչներն իրենք իրենց հեռացրել են գյուղական խորհուրդների լիազորներին ղեկավարելու գործից և այդ հանցանքը չի արգելվել խնայողական դրամարկղների վարչությունների պետերի կողմից: Նման դրություն է նկատվում այդ հանրապետությունների բազմաթիվ մարզերում և շրջաններում:

Խնայդրամարկղների Մոսկվայի մարզային վարչությունն արդեն բավականաչափ ժամանակ է գիտի միքանի հարյուր կոլտնտեսություններ, ուր մինչև այժմ վոչ վոք չի դիմել կոլտնտեսականներին՝ փոխառության մուծումներն ստանալու համար, բայց այդ կոլտնտեսություններում լիազորների աշխատանքները կազմակերպելու վոչ մի միջոց չի ձեռնարկում:

Շրջանային խնայողական դրամարկղների աշխա-

տողները շրջանային կազմակերպությունների առաջադրանքներով քաղաքական կամպանիաներ անցկացնելու համար գյուղխորհուրդները մեկնելով, այդ գյուղխորհուրդներում յեղած ժամանակ՝ լիակատար անտարբերություն են ցուցաբերում դեպի փոխառության և ավանդների դրությունը: Այդպես, օրինակ՝ Մոսկվայի մարզի Պուշկինյան շրջխնայդրամարկղի վարիչ Բուլացովը, յերկար ժամանակ գտնվելով Սոֆրենակու գյուղխորհրդում, վոչինչ չի արել փոխառության գանձումների պլանը կատարելու համար, մինչդեռ այդ գյուղխորհրդի յեռամսյակային պլանը յերկու ամսվա ընթացքում կատարված է միայն 21 տոկոսով, իսկ Սոֆրենակու կոլտնտեսությունում, վորտեղ փոխառությանը բաժանորդագրվել են 1,750 ռուբլով, մուծք է յեղել միայն 30 ռուբլի:

Փոխառության դրամները հավաքելու վրա աշխատանքի բազմաթիվ փաստերի հետ միասին՝ բազմաթիվ խնայողական դրամարկղներ չեն պայքարել յեղած բաժանորդագրությունն իրեն մակարդակի վրա պահելու համար: Մի ամբողջ շարք ձեռնարկություններում և հիմնարկություններում խնայողական դրամարկղները և ոժհանձնաժողովները չեն ապահովել մյուս ձեռնարկություններից յեկած բանվորների և ծառայողների բաժանորդագրությունը վերանորոգելու հնարավորությունը:

Խնայողական դրամարկղների սիստեմում քիչ չեն նվիրված և տաղանդավոր աշխատողներ, կուսակցական և անկուսակցական բոլշևիկներ, վորոնք աճել են գործնական առորին աշխատանքներում: Սակայն, այդ աշխատողների առաջ քաշումը ղեկավար աշխատանքի՝ տեղի յե ունենում չափազանց անվճռողաբար և դանդաղորեն: Նման դրությունն առանձնապես անհանդուրժելի յե, յերբ ՌՍՖՍՀ-ում խնայդրամարկղների և պետվարկի 57 յերկրային և մարզային վարչությունների՝ 20 վարչություններում փաստորեն չըկան սահմանված կարգով հաստատված պետեր, իսկ մի ամբողջ շարք կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղներում՝ չկան վարիչներ:

Խնայողական դրամարկղների աշխատողների պատրաստումն ու վերապատրաստումը վատ է կազմակերպված: Դասընթացների կոմպլեկտավորումը տեղի յե ունենում առանց հարկավոր ընտրության: Դասատուների քաղաքական և մասնագիտական պատրաստականությունը չափազանց ցածր է, իսկ նրանց վորակը բարձրացնելու համար միջոցներ չեն ձեռնարկվում: Դասընթացների ցանցի աշխատանքները վարչությունների կողմից ղեկավարելը միանգամայն անբավարար է: Դրա հետևանքով՝ դասընթացներում աշխատողներ պատրաստելու եֆեկտավորությունն աննշան է: Դասընթացներն ավարտող աշխատողները չեն ամրացվում խնայողական դրամարկղներում աշխատելու համար, այլ անցնում են ուրիշ հիմնարկություններ:

Աշխատողների տեխնիկական ուսուցումը կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղներում դրված է նույնպես անբավարար:

Պետաշխնայդրամարկղների և պետվարկի մի շարք վարչությունների պետեր ճգնում են փոխառության և ավանդների պլանի կատարման իրենց միանգամայն անբավարար աշխատանքն արդարացնել խնայողական դրամարկղների նախահաշվով բաց թողնվող

միջոցների անբավարար լինելով, որ միանգամայն սխալ է և վնասակար։ Այդ հաստատումների մտածածին և անհիմն բնույթը միանգամայն ակներև է։ 1937 թ. անցած յերեք յեռամսյակում ագիտացիոն ծախսերի համար բացված վարկերը ՌՍՖՍՀ խնայդրամարկղների մարզային վարչություններն օգտագործել են 64 տոկոսով, իսկ Ուկրաինական ՍՍՀ ընդամենը միայն 61 տոկոսով։°

Դեռ ավելին, մի շարք տեղերում վարկերն օգտագործվում են ոչ թե իրենց ուղղակի նպատակների համար, այլ յերբեմն նույնիսկ վատնվում են. ԲՍՍՀ Խնայդրամարկղների Վարչության նախկին պետ Սաուլկովն ագիտմիջոցառումների համար բացված վարկերի հաշվին ծախսել է 1500 ռուբլի քեֆեր սարքելու համար, որի պատճառով և հանված է աշխատանքից։ Հետագայում նա դիմակազերծ արվեց որպես ժողովրդի թշնամի։

Հաշվառումն ու հաշվետվությունը գտնվում են անբավարար վիճակում։ Խնայողական դրամարկղների ամփոփ հաշվետվությունը կազմված է միայն առաջին կիսամյակի համար, ընդվորում՝ վերջինիս մեջ չեն մտցրած Հեռավոր-Արևելյան յերկրի (տարվա սկզբից), Լենինգրադի (յերկրորդ յեռամսյակի համար) և այլ խնայդրամարկղների հաշվետվությունները։ Պետական փոխառությունների գործառնությունների հաշվարկումները պետական բյուջեյի հետ՝ կատարվում են ոչ ժամանակին (ՈւկՍՍՀ, ՈւզՍՍՀ)։ Բազմաթիվ մարզային վարչություններում բացակայում է իսկական պայքարը՝ հաշվետվությունն իր ժամանակին տալու, հաշվեկշիռը ռեալ լինելու և արժեքներն անվթար պահելու համար։



Վերստուգումները դեռևս միջոց չեն դարձել խնայդրամարկղների աշխատանքները վճռականապես առողջացնելու համար։ Վերստուգումներն անց են կացվում գործամոլաբար, առանց աշխատանքը գնահատելու, ինչպես հարկն է։ Վերստուգումների արդյունքների առթիվ հաճախ ընդունվում են ապօրինիկ, անտամ յեզրակացություններ և վճիռներ։ Վերստուգումների առթիվ ընդունվող վճիռների ոպերատիվ ստուգում չի անցկացվում։ Մի շարք կարևորագույն հարցեր — պլանի կատարումը, խնայողական դրամարկղների ցանցի դրությունը — չեն ընդգրկվում վերստուգմամբ։ Վերստուգման աշխատողների նշանավոր մասի քաղաքական մակարդակը բացարձակապես անբավարար է, իսկ նրանց քաղաքական դաստիարակության աշխատանքները վատ են կազմակերպված։

Խնայողական դրամարկղների աշխատանքները վճռականապես բարելավելու նպատակով՝ հրամայում եմ.

1) Ցերկրային, մարզային, քաղաքային ու շրջանային ֆինանսական բաժինների վարիչներին՝ կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների վարիչների հետ միասին վերանայել խնայողական դրամարկղների ցանցի կառուցման ճշտությունը յուրաքանչյուր քաղաքում և շրջանում։ Այդ վերանայումի հետևանքով որոշել, թե որ գյուղերում և քաղաքներում պիտի նորից բացվեն խնայողական դրամարկղներ, որտեղ պիտի արդեն յեղած խնայողական

դրամարկղները վերակազմել բարձր տիպի խնայողական դրամարկղների:

Խնայողական դրամարկղների ցանցի ամրացման և լայնացման գործնական առաջադրությունները դաշնակից հանրապետությունների պետաշխնայդրամարկղների և պետվարկի համապատասխան վարչությունների միջոցով մեկ ամսվա ժամկետում ներկայացնել Պետաշխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչության՝ քննության և հաստատման համար:

Նախազգուշացնել ֆինանսական մարմինների և խնայողական դրամարկղների ղեկավարներին, որ խնայողական դրամարկղների ցանցի լայնացմանը մեխանիկական մոտեցում ունենալն անթույլատրելի յե և որ յուրաքանչյուր առանձին խնայողական դրամարկղ բանալու հարցի մանրազննին հիմնավորված և մտածված լուծումն անպայման անհրաժեշտ ե:

Պետաշխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչության պետ ընկ. Սոլինին, դաշնակից հանրապետությունների պետաշխնայդրամարկղների և Պետվարկի վարչությունների առաջադրությունների հիման վրա՝ ներկայացնել ինձ հաստատման համար 1938 թ. խնայդրամարկղների լրացուցիչ ցանցի կազմակերպման պլանը, յելնելով նրանից, որ նոր դրամարկղներ պիտի բացվեն առաջին հերթին այնտեղ, վորտեղ այդպիսիք սխալ կերպով փակել են 1935—1936 թ. թ.:

2. ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի 1935 թ. հունիսի 10-ի № 529 հրամանը, վորի հիման վրա անցկացվել խնայողական դրամարկղների մասսայական փակումը, վորպես վնասակար՝ վերացնել:

Սահմանել, վոր՝

ա) Յուրաքանչյուր խնայողական դրամարկղ կարող ե բացվել, փակվել կամ վերակազմվել մի տիպից մյուսը միայն Պետաշխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչությունից նախապես թույլտվություն ստանալով — համապատասխան դաշնակից հանրապետության Պետաշխնայդրամարկղների և Պետվարկի Վարչության միջնորդությամբ:

բ) Կենտրոնական (շրջանային) խնայողական դրամարկղի ամեն մի առաջադրություն՝ ստորին խնայողական դրամարկղներ բացելու կամ փակելու մասին, պիտի համաձայնեցված լինի քաղխորհրդի կամ շրջգործկոմի հետ և Պետաշխնայդրամարկղների ու Պետվարկի համապատասխան վարչության ներկայացուցչի կողմից պիտի մանրազնին ստուգվի տեղում, տրվող միջոցառումների նպատակահարմարության տեսակետից:

Վարչությունների պետերը և կենտրոնական (շրջանային) խնայողական դրամարկղների վարիչներն անձնական պատասխանատվություն են կրում խնայողական դրամարկղների ցանցի ճիշտ կառուցման համար:

գ) Դաշնակից և ավտոնոմ հանրապետությունների ֆինանսների ժողովրդական կոմիսարները, ֆինանսական բաժինների վարիչները նույնպես պատասխանատու յեն խնայողական դրամարկղների ցանցի ճիշտ կառուցման համար և պարտավոր են սիստեմատիկորեն ստուգել խնայողական դրամարկղների ցան-

յը զարգացնելու և ամրացնելու բոլոր անցկացվող միջոցառումները:

3. Պարտավորեցնել խնայողական դրամարկղների հանրապետական, յերկրային և մարզային վարչությունների պետերին՝ մինչև 1938 թ. փետրվարի 1-ը վորոշել այն բոլոր խնայողական դրամարկղները, վորոնց շենքերը գտնվում են վատ վիճակում և անհետաձգելի վերանորոգման կարիք են զգում, և 1938 թ. ընթացքում լրիվ չափով վերանորոգել և կարգի բերել այդ խնայողական դրամարկղները: Ընդսմին՝ չթույլատրել դրամարկղների վերանորոգման և կահավորման համար տրվող միջոցները մեծ քանակությամբ դրամարկղների միջև մանր գումարներով բաժան-բաժան անելը, վորը զրկում է այդ դրամարկղներում բոլոր անհրաժեշտ վերանորոգումը կատարելու հնարավորությունից: Արգելել խնայողական դրամարկղները զարդարելու և կահավորելու ավելորդությունները:

Այն կապակցությամբ, վոր բազմաթիվ խնայողական դրամարկղներ, նույնիսկ Լենինգրադում, պահվում են կեղտոտ և անկարգ վիճակում, պարտավորեցնել խնայողական դրամարկղների բոլոր վարիչներին՝ ամեն որ հետևելու դրամարկղներում մաքրության և կարգ պահպանելու գործին:

4. Դաշնակից հանրապետությունների պետաշխնայդրամարկղների և պետվարկի վարչությունների պետերին՝ մինչ 1938 թ. փետրվարի 1-ը վերանայել աշխատողների պատրաստման և վերապատրաստման դասընթացների ցանցը, պահպանելով դասընթացները միայն այն կետերում, վորտեղ հնարավորություն կա



ապահովելու այդ դասընթացները վորակյալ դասատուական կազմով: Միջոցներ ձեռնարկել բարձրացնելու դասատուների վորակը՝ սեմինարներ, հեռակա կոնսուլտացիաներ և այլն կազմակերպելու միջոցով:

5. Շրջանային խնայողական դրամարկղների վարիչների, գլխավոր հաշվապահների, տեսուչների և խնայդրամարկղների վերահսկիչների վորակը բարձրացնելու նպատակով՝ 1938 թ. ընթացքում կազմակերպել այդ աշխատողների պատրաստման և վերապատրաստման դասընթացներ՝

ա) Պատրաստել դասընթացային ցանցի միջոցով՝

մարդ

1. Շրջխնայդրամարկղների վարիչներ . . . 200
2. Գլխավոր հաշվապահներ . . . . . . . 150
3. Տեսուչներ . . . . . . . . . 100
4. Խնայդրամարկղների վերահսկիչներ . 2200

բ) Պատրաստել գործնական ուսուցման միջոցով՝

մարդ

1. Շրջխնայդրամարկղների գլխավոր հաշվապահներ . . . . . . . . . . . . 200
2. Խնայդրամարկղների վերահսկիչներ . . 2100

գ) Վերապատրաստել դասընթացային ցանցի միջոցով՝

մարդ

1. Շրջխնայդրամարկղների վարիչներ . . 900
2. Գլխավոր հաշվապահներ . . . . . . 740
3. Տեսուչներ . . . . . . . . . 400
4. Վերահսկիչներ . . . . . . . . 1300
5. Մարզային վարչությունների աշխատողներ 100

Պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչության պետին՝ տասնօրյա ժամկետում սահմանել յուրաքանչյուր հանրապետության, մարզի, յերկրի համար աշխատողներ պատրաստելու և վերապատրաստելու առաջադրանքներ։

6. Պետաշխխնայդրամարկղների և պետվարկի վարչությունների պետերին՝ ամրացնել վերստուգիչների կադրերը՝ խնայողական դրամարկղների քաղաքականապես ստուգված, վորակյալ աշխատողներին այդ աշխատանքների համար առաջ քաշելու հաշվին։ Հաշվի առնելով առանձնահատուկ պայմանները—վերստուգիչների աշխատանքների շրջիկ բնույթը — Պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչությանը կից կազմակերպել մշտական յեռամսյա դասընթացներ նրանց քաղաքական և գործարարական վորակը բարձրացնելու համար, բաց թողնելով այդ դասընթացների միջոցով 1938 թ. վոչ պակաս, քան 100 մարդ։

7. Պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչության պետ ընկ. Սոլիեին՝ ապահովել մինչ 1938 թ. հունվարի 15-ը կազմելու խնայողական դրամարկղների վերստուգիչների նոր ծրագրեր, արտացոլելով նրանց մեջ վերստուգման աշխատանքների նոր խնդիրներն ու մեթոդները։

8. Նախազգուշացնել խնայողական դրամարկղների ղեկավարներին և գլխավոր հաշվապահներին, վոր նրանք անձնապես պատասխանատու յեն հաշվառման և հաշվետվության դրվածքի և բոլոր հաշվարկումների ժամանակին կատարելու համար։

Պարտավորեցնել խնայդրամարկղների հանրապետական, յերկրային և մարզային վարչությունների պետերին և գլխավոր հաշվապահներին՝ ստուգելու յուրաքանչյուր կենտրոնական (շրջանային) խնայողական դրամարկղի հաշվառման և հաշվետվության դրությունը և անցկացնելու անհրաժեշտ միջոցառումներ՝ 1937 թ. տարեկան հաշվետվությունը ժամանակին ներկայացնելու համար։ Ըստ դրության առ 1-ն հունվարի, 1938 թ. ճշգրիտ կերպով համեմատել ամեն տեղ ավանդների և պահպանման ու դրավադրման գործառնությունների անձնական հաշիվները բալանսի հետ, նաև՝ անցկացնել դրամային կանխիկի, պետական փոխառությունների պարտատոմսերի, արժեքավոր թղթերի և հաշվառման բլանկների նատուրայի վերստուգում։

Պարտավորեցնել պետաշխխնայդրամարկղների և պետվարկի վարչությունների պետերին և գլխավոր հաշվապահներին՝ վերանայելու և ամրացնելու կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների գլխավոր հաշվապահների կազմն ստուգված և վորակյալ աշխատողներով։

9. Լուծարքի յենթարկել պետական բյուջեյի հետ կատարվող հաշվարկումների պարտքը՝ պետական փոխառությունների գործառնությունների գծով։ Հետագայում խստագույն հսկողություն սահմանել այդ հաշվարկումները պետական բյուջեյի հետ ժամանակին կատարելու վրա և պատասխանատվության յենթարկել հաշվարկումների ժամանակին կատարումը ձգձգող անձանց։

10. Պարտավորեցնել դաշնակից և ինքնավար հանրապետությունների ֆինանսների ժողովրդական կոմի-

սարներին, յերկրային և մարզային ֆինանսական բաժինների վարիչներին՝ հսկողություն սահմանելու պետական փոխառությունների գործառնությունների գծով պետական բյուջեյի հետ հաշվարկումներ կատարելու խնայդրամարկղների աշխատանքների վրա:

11. Վերանայել և տասնօրյա ժամկետում ներկայացնել ինձ ի հաստատություն՝ Պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչության, պետաշխխնայդրամարկղների և պետվարկի հանրապետական, յերկրային և մարզային վարչությունների ապարատի ստրուկտուրան: Ստրուկտուրան վերանայելիս՝ լիկվիդացիայի յենթարկել ֆունկցիոնալական վարչությունների կառուցման մեջ և ուժեղացնել միջոցների ներգրավման պլանի կատարումն անմիջականորեն կազմակերպող աշխատողների կազմը:

12. Պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի բոլոր վարչություններին՝ այս հրամանն ստանալուն պես՝ անհապաղ գործուղել իրենց աշխատողներին հետամնաց շրջանները, փոխառության մուծումների գանձման և ավանդների ներգրավման աշխատանքները տեղում ստուգելու և շրջանային խնայողական դրամարկղներին այդ աշխատանքներում գործնական օգնություն ցույց տալու համար:

13. Խնայդրամարկղների վարչությունների պետերին և կենտրոնական (շրջանային) խնայողական դրամարկղների վարիչներին՝ վոչ պակաս քան յեռամսյակում մեկ անգամ հաշիվ տալ համապատասխան գործադիր կոմիտեների և տեղական Խորհուրդների նախագահությունների առաջ: Մոտակա նման զեկուցման մեջ լուսաբանել ընթացիկ տարվա 4-րդ յեռամսյակի



3291
38

պլանը խնայդրամարկղների կողմից կատարելու արդյունքները և նախատեսնել միջոցառումներ, վորոնք պետք անցկացվեն տեղական Խորհուրդների և խնայողական դրամարկղների կողմից՝ աշխատավորության խնայողությունները 1938 թ. ներգրավելու աշխատանքները բարելավելու համար:

14. Պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչության պետին՝ մինչ 1938 թ. հունվարի 10-ը ներկայացնել ինձ շրջանային խնայողական դրամարկղների լավագույն վարիչների և տեսուչների թեկնածությունները փոխառության և ավանդների 4-րդ յեռամսյակի պլանը հաջող կատարելու գործով պարգևատրելու համար:

Խնայողական դրամարկղներն ունեն բոլոր պայմաններն այն բանի համար, վորպեսզի անհապաղ սկսեն պլանները միշտ կատարել և գերակատարել: Պետք է միայն բոլշևիկյան կարգ մտցնել խնայողական դրամարկղներում, ամրացնել խնայողական դրամարկղների ապարատն այնպիսի ստուգված աշխատողներով, վորոնք աճել են գործնական ստորին աշխատանքներում, բարձրացնել բոլշևիկյան զգոնությունը, վերջ տալ ավանդատուներին և պետական փոխառությունների պարտատոմսեր պահողներին արհամարհական վերաբերմունք ցույց տալուն, բարելավել աշխատանքի կազմակերպումը, գործնականում ծավալել սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունը խնայողական դրամարկղներում: Խնայողական դրամարկղի յուրաքանչյուր վարիչ՝ ներգրավելով հասարակայնությանը, պարտավոր է գործարար ձևով քննել յուրաքանչյուր խնայողական դրամարկղի աշխատանքների բոլոր թե-

*րությունները, բացել դրամարկղի վատ աշխատանքի, միջոցների ներգրավման պլանը վատ կատարելու պատճառները և ամենակարճ ժամկետում վերացնել այդ պատճառները։*

*Ներկա հրամանը քննարկել բոլոր խնայողական դրամարկղների աշխատողների ժողովներում։*

ԽՍՀ Միության Ֆինանսների ժողովրդական
կոմիսար՝ Վ. ԶՈՒԲԱՐ

*«Խորհրդային Հայաստան»-ի հրատ. տպարան*
*Գլավլիտ* 6483, *պատվ.* № 186, *տիրաժ* 300

ՀՀ Ազգային գրադարան
NL0204403